

ՓԱՍՏԵՐ ՈՒ ՄՏԱՎԱՐԺԱՆՔՆԵՐ

1. Սահմանադրության 215-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.
«Մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված դատարանների նախագահները և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահները շարունակում են պաշտոնավարել մինչև Սահմանադրության 166-րդ հոդվածով սահմանված կարգով դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների նշանակվելը կամ ընտրվելը, որն իրականացվում է Բարձրագույն դատական խորհրդի կազմավորումից հետո՝ ոչ ուշ, քան վեց ամսվա ընթացքում»:
-Այդ ժամկետն ավարտվում է 2018թ. օգոստոսի 5-ին: ԲԴԽ-ն չի կարող սահմանադրական ժամկետը խախտել:
2. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով հստակ սահմանված են դատավորի պաշտոնում թափուր տեղ առաջանալու դեպքում դատավորների նշանակման կարգն ու կոնկրետ ժամկետները: Բարձրագույն դատական խորհուրդը նշանակումները կատարել է բացառապես Օրենսգրքի պահանջներին համապատասխան: Ընդ որում, թափուր տեղերում նշանակվել են առաջին ատյանի դատարանի 3, վերաքննիչ դատարանների՝ 4 դատավորներ: Բոլորը եղել են նախկին Արդարադատության խորհրդի կողմից կազմված ցուցակներում ներառված թեկնածուներ: Միաժամանակ, ստեղծված է այնպիսի վիճակ, որ ըստ օրենքի դեռևս առաջիկա 3-4 տարիների ընթացքում մասնավորապես քաղաքացիական մասնագիտացման գծով, նշանակումները շարունակվելու են կատարվել 2016-2017 թվականներին Արդարադատության խորհրդի կազմած ցուցակներից:
3. Անցած 3.5 ամսում Սահմանադրության և Օրենսգրքի պահանջների հիման վրա ԲԴԽ-ին ներկայացված 327 թեկնածուներից նշանակման, ընտրության կամ առաջխաղացման ցուցակներում ներգրավման համար ԲԴԽ անդամների 6 և ավելի ձայներ են ստացել 29 անձ՝ շուրջ 10-ից մեկը (թեկնածուները շուրջ 10 անգամ գերազանցել են նշանակման համար օրենքով սահմանված տեղերի թվին):
4. 327 թեկնածուների քվեարկության արդյունքներով ԲԴԽ անդամների կողմից միաձայնությամբ կողմ է քվեարկվել ընդամենը **4 դեպքում (1.2 տոկոս)**, որից 3-ը վերաբերում է հեռավոր մարզեր գնալ ցանկացած հավակնորդներին, որտեղ ամիսներով դատավորների տեղը թափուր էր մնացել: Այսինքն, **խորհրդի անդամները 323 դեպքերում միակարծիք չեն եղել թեկնածուին կողմ քվեարկելիս:** Համեմատության կարգով նշենք, որ նախկին արդարադատության խորհրդում բացառություն են եղել ոչ միաձայնությամբ ընդունված որոշումները, իսկ խորհրդի դատավոր անդամները պարզապես հիմնականում միակամ են քվեարկել:
5. Նշված 29 դեպքից շուրջ 50 տոկոսի պարագայում **նոր քվեարկություն է կազմակերպվել**, որովհետև թեկնածուներից որևէ մեկն անցողիկ քվե չի ստացել:
6. Բացառապես տեղ չի գտել որևէ դեպք, երբ քվեարկության ժամանակ խորհրդի անդամների նկատմամբ որևէ ուղղակի կամ անուղղակի ճնշում գործադրվի: Քվեարկությունը եղել է իրենց խղճին ու համոզմունքներին համապատասխան:
7. Դատական օրենսգրքով ամրագրվել են նաեւ հնարավոր ոչ հիմնավոր մոտեցումները սրբագրելու ընթացակարգեր: Մասնավորապես՝ Օրենսգրքի 107-րդ հոդվածով սահմանված են հավակնորդներին առնչվող հետևյալ դրույթները.

«5. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և պաշտոնատար անձինք, որոնք տիրապետում են տվյալ հավակնորդի վերաբերյալ այնպիսի տեղեկատվության, որը կասկած է հարուցում տվյալ անձի կողմից դատավորի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ հմտությունների ու որակների առկայության վերաբերյալ, պարտավոր են հավակնորդների համալրված ցուցակը հրապարակելու օրվան հաջորդող երկու շաբաթվա ընթացքում այդ մասին գրավոր հայտնել Բարձրագույն դատական խորհրդին: Պետական մարմինները և պաշտոնատար անձինք Նշված տեղեկությունները պարտավոր են տրամադրել նաև Բարձրագույն դատական խորհրդի պահանջով»:

«6. Յուրաքանչյուր ոք, ով տիրապետում է տվյալ դատավորի թեկնածուի հավակնորդի վերաբերյալ փաստաթղթավորված այնպիսի տեղեկատվության, որը կասկած է հարուցում տվյալ անձի կողմից դատավորի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ հմտությունների ու որակների առկայության վերաբերյալ, կարող է հավակնորդների ցուցակի հրապարակման օրվան հաջորդող երկու շաբաթվա ընթացքում այդ մասին հայտնել Բարձրագույն դատական խորհրդին»:

Բացի վերոնշյալից, այդ նպատակն է հետապնդում նաև Օրենսգրքի 124-րդ հոդվածի 10-րդ մասը, երբ նախատեսում է դատավորների առաջխաղացման ցուցակները կազմելուց հետո դրանց առանձին վավերացման ընթացակարգ՝ հնարավորություն տալով վերջնական որոշումը կայացնել առավել ամբողջական տեղեկատվության ամփոփման հիման վրա՝ հաշվի առնելով նաև ցուցակները կազմելուց հետո ստացված հիմնավոր ահազանգերը:

ԱՄՓՈՓՈՒՄ - սրանք են փաստերն ու սա է իրողությունը, մնացածը չարական մտավարժանքներ են:

Դատական դեպարտամենտի մամուլի ծառայություն